«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ Fax: +374 10 564111 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/2685

«14» 10 2021 թ.

«ՕՊՏՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն Ա. Մակարյանին

Հարգելի պարոն Մակարյան.

Համաձայն 2021 թվականի ապրիլի 26-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) և «ՕՊՏՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված տնտեսական և կենցաղային ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» պայմանագրի՝ Ձեր ընկերությունը պարտավորվել է մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը՝ թվով 3 հատ փոշեկուլ (Elitech ՊՊԱ-18CL, Elitech LLC):

Ըստ պայմանագրի մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մայիսի 26-ին: Բազմաթիվ անգամ բանավոր տեղեկացնելուց զատ, սույն թվականի հուլիսի 15-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից Ձեզ տրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ՝ մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է: Սակայն Ձեր կողմից մատարակարումը կրկին չի իրականացվել և բանավոր տեղեկացրել եք ապրանքի մատակարարումից հրաժարվելու մասին:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 26.04.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-3-ԵՊԲՀ-5» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է պատասխանատու ստորաբաժանման գրությունը:

Առդիր 1 թերթ:

ՌԵԿՏՈՐ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

«ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԲԱԺԻՆ

Հ2, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարանի
ռեկտոր՝ պարոն Ա.Ա.Մուրադյանին

ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

Հայտնում եմ Ձեզ, որ ԵՊԲՀ հիմնադրամի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.21թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ- 2021/3-3-ԵՊԲՀ-5 ծածկագրով հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման և գնման պայմանագիր: Պայմանագրով նշված ապրանքատեսակի /Ձեռքի փոշեկուլ – 3 հատ/ մատակարարման ժամկետները Վաճառողը չի պահպանել: Լրացել է նաև Վաճառողի կողմից ուղարկված դիմում/բացատրագրում նշված ապրանքի մատակարարման վերջնաժամկետը՝ / ս.թ 30.09.21թ/:

Ելնելով վերոնշվածից՝ խնդրում եմ Ձեր թույլտվությունը համապատասխան ստորաբաժանմանը «Օպտշին» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը / հրավերով նախատեսված 28 -րդ չափաբաժնի մասով/ լուծելու համար:

*Գնման հայտը նախագծած պատասխանատու
ստորաբաժանման ղեկավար՝*

ՈւԳՄՏԱ բաժնի պետ՝ *Ա.Աղայան*

04.10.21.